ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ IX—XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ապրանքային արտադրությունը առաջանալով ստրկատիրության դարաշրջանում հարատևում է նաև հետագա հասարակությունների մեջ, կրելով ինչպես քանակական, նույնպես և որակական փոփոխություններ։ Սակայն միշտ չէ, որ նրա զարգացումը տեղի է ունենում վերընթաց գծով։ Շատ երկրների նման Հայաստանում ևս ստրկատիրական հասարակության դարաշրջանում ապրանքային արտադրության մակարդակը համեմատաբար ավելի բարձր էր, քան վաղ ֆեոդալական ժամանակաշրջանում։ Ապրանքային արտադրության նվազումը իր հետ բերում է և առևտրի թուլացում։ Վերջին հանգամանքը դյուրությամբ նկատել և արձանագրել են հին պատմիչները, իսկ հայագետ ուսումնասիրողներից ոմանք մինչև վերջին ժամանակներս առևտրի, մասնավորապես տարանցիկ առևտրի պատմական ելևէջներով են բացատրել Հայաստանի հին ու միջնադարյան քաղաքների ոչ միայն առաջացումն ու զարգացումը, այլև տոկարացումն ու անկումը։ Տարանցիկ առևտրին նման խոշոր և որոշիչ դեր վերագրելը բնականաբար պետք է հանգեցներ քաղաքների զարգացումը կամ անկումը արտաքին քաղաքական հանգամանքներով բացատրելուն։ Հին Հայաստանի քաղաքների անկումն, օրինակ, բացատրվել է Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տարանցիկ առևտրի անկմամբ, որն իր հերթին դիտվել է իբրև հետևանք արաբա-բյուզանդական երկարատև պատերազմական ընդհարումների։

Բնավ չթերագնահատելով այդ հանգամանքների նշանակությունը, միաժամանակ չենք կարող չնշել, որ դրանք խաղում էին ոչ թե որոշիչ, այլ օժանդակ դեր։ Քաղաքների առաջացումը և զարգացումը հին Հայաստանում հիմնականում հետևանք էր այն բանի, որ դեռևս վաղ ստրկատիրական հասարակության մեջ արտադրողական ուժերի զարգացման հիման վրա տեղի էր ունեցել աշխատանքի այն մեծ հասարակական բաժանումը, որով արհեստագործությունը անջատվեց երկրագործությունից և կենտրոնացավ քաղաքներում։

Հին Հայաստանում առաջացել էին շուրջ երկու տասնյակ քաղաքներ, որոնք այս կամ այն չափով դարձել էին արհեստային արտադրության և առևտրի կենտրոններ։ Քաղաքը խաղում էր ղդալի դեր, ապրանքային արտադրության մակարդակը հասել էր նկատելի բարձրության։ Սակայն ֆեոդալական հասարակության երկունքի և զարգացման վաղ շրջանում պետք է առաջանար և ամրապնդվեր այդ հասարակության հիմքը կազմող հողային սեփականությունը և հիմնական արտադրողն էլ ֆեոդալական կախման մեջ կարող էր

ընկնել զարգացող հողային հարաբերությունների հիմունքներով, ուստի քաղաքը կորցրեց իր վարչա-քաղաքական, մանավանդ տնտեսական նշանակությունը։ Այդ էր պատճառը, որ Շապուհ Բ-ի արշավանքների հետևանքով 360-ական թվականներին ավերված հայկական քաղաքները այլևս չվերականգնվեցին և քայքայվելով վերածվեցին ավանների, բերդերի, իսկ շատերը բոլորովին անհետացան։ Ապրանքային արտադրությունը ծայր աստիճան նվազեց, բնական տնտեսությունը, որը մինչ այդ էլ իշխող էր, քաղաքների անկումով համայնապարփակ բնույթ ստացավ։ Դարեր անցան, մինչև որ ֆեոդալական հասարակության ամրապնդման, նրա արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ ավելի լայն հիմքերի վրա վերարտադրվեց աշխատանքի հասարակական բաժանումը՝ արհեստագործության անջատումը երկրագործությունից և կենտրոնացումը քաղաքներում։ Առաջացավ և ձևավորվեց ֆեոդալական քաղաքը՝ անջատվելով գյուղից։ Այդ բանը Հայաստանում տեղի ունեցավ IX—X դարերում, երբ վերակենդանացան մի շարք հին քաղաքներ և առաջացան նորերը։

IX—XIII դդ. ապրանքային արտադրությունը զարգանում է ավելի լայն չափերով, և խաղում է ավելի խոշոր դեր, քան հին Հայաստանում։ Սակայն դա տեղի չի ունենում միանգամից. IX—X դդ. ապրանքային արտադրությունը զարգանում էր ավելի դանդաղ և ավելի սահմանափակ շրջանակներում, բայց հետզհետե ավելի աճելով և ընդարձակվելով, ինչպես ամբողջ Մերձավոր Արևելքում, նույնպես և Անդրկովկասում իր բարձրակետին է հասնում XII—XIII դարերում։

Ապրանքային արտադրության զարգացման համար ֆեոդալական հասարակության մեջ կային մի շարք պատճառներ ու պայմաններ։ Դրանցից ամենագլխավորն էր հենց արհեստի անջատումը երկրագործությունից և նրա կենտրոնացումը քաղաքներում։ Արտադրության մեջ տեղի ունեցած աշխատանքի նման բաժանումով, բնականաբար տնտեսության երկու ճյուղերի կամ գյուղի ու քաղաքի միջև առաջացավ ավելի լայն ապրանքափոխանակության անհրաժեշտությունը, որը հետզհետե աճում էր աշխատանքի բաժանման նույն պրոցեսի խորացման, քաղաքների ու սրանց բնակչության աճի, տնտեսության ճյուղերի և ընդհանրապես արտադրողական ուժերի զարգացման հետևանքով։

Ամենից առաջ ապրանք են դառնում երկրագործական և անասնապահական մթերքների բազմաթիվ տեսակներից բուրդը, բամբակը, մետաքսը, մորթիները, միսը, հացը, խաղողը, գինին, մրգերը և այլ մթերքներ։ Դրանց մի մասը դառնում էր հումք արհեստագործական արտադրանքի համար, մյուս մասը ապրանք դառնալով բավարարում էր քաղաքների բնակչության անմիջական սպառողական պահանջները, որոնք աճում էին քաղաքների աճին համեմատ։ Վերջապես երկրագործական որոշ մթերքներ՝ ցորեն, գինի, անասուններ՝ ձիեր, ջորիներ արտահանվում են երկրից դուրս։ Առևտրի մեջ սկսում է ներգրավվել ֆեոդալական հավելյալ արդյունքի մի մասը, մանավանդ հենց այդ ժամանակներում է առաջանում ֆեոդալական կալված-հայրենիքը, որի մի մասի վրա ֆեոդալները վարում էին իրենց սեփական տնտեսությունը։ Այս ամենը հաշվի առնելով հանդերձ, այնուամենայնիվ, պետք է ասել, որ գյուղատնտեսական մթերքների շատ փոքր մասն էր ապրանքայնանում։

Ֆեոդալական հասարակության մեջ ապրանքային արտադրության զարգացումը տեղի էր ունենում գերազանցապես երկրագործությունից անջատված և քաղաքներում կենտրոնացած արհեստային արտադրության աճի շնորհիվ։

Ապրանքային արտադրության զարգացումը արհեստագործության մեջ դրսևորվում էր մի շարք ձևերով ու եղանակներով։ Ընդարձակվում էր երկրի բնական հարստությունների շահագործումը, մի շարք մետաղներ և հանքեր նախկինից ավելի մեծ չափերով էին արդյունահանվում, որպեսզի բավարարեին արհեստագործության աճող պահանջը, իսկ այնպիսի նյութեր, ինչպես երկաթը, պղինձը, աղը, բորակը և այլն առուծախի առարկա էին դարձել ոչ միայն երկրի ներսում, այլև արտահանվում էին երկրից դուրս։

Սակայն գլխավորն այն է, որ արհեստային արտադրանքը սկսում է ավելի ու ավելի մեծ չափերով սպասարկել քաղաքի և գյուղի բնակչության սպառողական, ինչպես և մի շարք տնտեսական պահանջները։

Արհեստի անջատումով երկրագործությունից և քաղաքի անջատումով գյուղից, քաղաքի բնակչության զգալի մասը կարիք էր զգում երկրագործական մթերքների, որոնք պետք է քաղաք բերվեին վաճառքի, իսկ քաղաքի արհեստավորները սպասարկում էին գյուղատնտեսության և գյուղացու որոշ պահանջմունքը՝ իրենց արտադրանքը շուկայում վաճառքի հանելով։ Արտադրանքի որոշ տեսակներ էլ գյուղերն էին տարվում, այնտեղ վաճառելու։

Արհեստային արտադրանքի զգալի մասը կոչված էր բավարարելու նաև քաղաքային բնակչության կենցաղային և զուտ սպառողական պահանջները։

Քաղաքի արհեստավորները արտադրում էին նաև զանազան գործիքներ, իրեր, առարկաներ, հարմարանքներ ու նյութեր, որոնք պետք էին արհեստների բազմազան ու շարունակ աճող ճյուղերում գործադրելու համար։ Շատ սակավ էր պատահում, որ տվյալ արհեստավորները իրենք արտադրեին իրենց անհրաժեշտ բոլոր գործիքները, հարմարանքներն ու նյութերը, ընդհակառակը, նրանք այդ ամենը գերազանցապես ձեռք էին բերում իրրև ուրիշ արհեստավորների արտադրած ապրանք։

Արհեստային արտադրանքի մի զգալի մասը սպասարկում էր ֆեոդալական դասերի սպառողական պահանջները. հետևաբար աճում էր մանավանդ պերճանքի առարկաների արտադրությունը։

Այսպիսով, իրրև սպառողներ, հանդես էին գալիս հասարակության բոլոր խավերը, որոնց պահանջմունքը շատ բազմակողմանի էր, ուստի և պայմանավորում էր բազմազան տեսակի սպառողական արժեքների արտադրությունը։ Այդ արտադրությունը, սակայն, կրում էր սահմանափակ բնույթ, քանի որ կատարվում էր բնական տնտեսության պայմաններում։

Քանի դեռ արհեստը չէր անջատվել երկրագործությունից, բնակչության այդ բազմակողմանի պահանջմունքին բավարարություն էին տալիս գյուղական, առավելապես տնայնագործ արհեստավորները և ֆեոդալական զզյակների ու վանքերի արհեստավորները[1]։ Այն բանից հետո, երբ արհեստը անջատվեց երկրագործությունից, գյուղական արհեստագործները և տնայնագործները, իհարկե, շարունակում էին բավարարել գյուղական բնակչության հիմնական պահանջները արհեստային արտադրության նկատմամբ, սակայն այդ պահանջմունքի մի մասն էլ սկսում են բավարարել քաղաքի արհեստավորները։ Ժամանակի ըն-

---

[1] Տաքեի վանքը, օրինակ, X դարի սկզբներին ուներ մի շարք գործատուն-արհեստանոցներ, որոնց վերաբերյալ վկայություններ կանում ենք Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ. տե՛ս Թիֆլիս, 1910 թ. հրատարակություն, էջ 225—226 և 247։

թացքում վերջիններիս դերը զգալիորեն մեծանում է։ Քաղաքների շրջապատում գտնվող գյուղերի ու ավանների բնակչության պահանջը հետզհետե առավել մեծ չափերով բավարարվում էր քաղաքային արհեստավորների արտադրանքով։

Ֆեոդալական դասերի պահանջներն էլ այլևս չէին կարող լրիվ չափով բավարարվել գյուղական և վանքային արհեստանոցների արտադրությամբ։ Այդ դասերին անհրաժեշտ արհեստային արտադրանքի մեջ քաղաքային արտադրանքի բաժինը հետզհետե ավելի ու ավելի մեծանում էր։ Այս տեսակետից ընորոշ է, որ Արագածի լանջին բարձրադիր մի վայրում ծվարած Անբերդի պեղումների ժամանակ հայտնաբերվել են շատ իրեր, որոնք քաղաքային արհեստագործության արտադրանք են ներկայացնում և ֆեոդալական այդ դղյակը տասել են քաղաքներից, անգամ այլ երկրներից։

Արհեստային արտադրանքի նկատմամբ ավելի մեծ էր քաղաքային բոլոր խավերի, մանավանդ քաղաքներում բնակչության հիմնական զանգվածը կազմող միջին խավի պահանջարկը։ Մի խոսքով միջնադարյան մեծ քաղաքը առաջանալ և զարգանալ չէր կարող, եթե ապրանքային արտադրությունը սպասարկեր բնակչության միայն վերնախավի պահանջարկը։ Միջնադարյան քաղաքներում այնքան մեծ թվով արհեստներն ու արհեստային մասնաճյուղերը առաջացել էին շնորհիվ այն բանի, որ նրանք սպասարկում էին բնակչության բոլոր խավերի սպառողական պահանջները։

Վերջապես, արհեստային արտադրանքի մի մասը դառնում էր միջազգային տարանցիկ առևտրի առարկա և վաճառքի համար փոխադրվում էր քաղաքից քաղաք և երկրից երկիր։

Ֆեոդալական քաղաքի արհեստագործությունը միջնադարյան արդյունաբերությունն էր, որը կրում էր մանր ապրանքային արտադրության բնույթ և սպասարկում էր հասարակության բոլոր խավերի կողմից նրան ներկայացվող պահանջարկը, որով և պայմանավորված էր ներքին շուկայի զարգացումը։

Արհեստային արտադրությունը և նրա տեխնիկան ուսումնասիրելիս տեսնում ենք, որ IX—X դարերում դեռևս գերակշռում էր արտադրանքը՝ անմիջապես սպառող պատվիրատուի համար։ Դրան համապատասխան արհեստագործության տեխնիկան անհատական արտադրության բնույթ էր կրում, յուրաքանչյուր իր առանձին և մանրակրկիտ մշակման էր ենթարկվում։

Դեռևս X—XI դարերում արհեստային արտադրության որոշ ճյուղեր սկսում են ավելի ու ավելի արտադրել նաև շուկայի համար և դրան համեմատ երևան են գալիս տեխնիկական որոշ միջոցներ ու եղանակներ, որոնք ընորոշ են իրերի ոչ թե անհատական և խիստ սահմանափակ, այլ շուկայական՝ քիչ թե շատ լայն արտադրության համար։ Այս երևույթները սակայն ավելի որոշակի նկատելի են XII դարի երկրորդ կեսում և XIII դարում, երբ համարյա բոլոր հիմնական արհեստների գծով արտադրանքը սրվեն առավելապես շուկայական բնույթ է ստանում։ Այսպիսով XI—XIII դարերում ապրանքային արտադրությունը զարգանում է և դրան համապատասխան զարգանում ու փոփոխվում է արհեստագործության տեխնիկան։ Ապրանքային արտադրության զարգացման պատկերը պարզ ցույց տալու նպատակով կփորձենք այս տեսանկյունից ամփոփել Անիի, Դվինի և Գառնիի պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերի վրա կատարած մեր դիտողությունները։

Ապրանքային արտադրության զարգացումը արհեստագործության բնագավառում ամենից առաջ արտահայտվել է արտադրանքի տեսակների ու քանակի շատ նկատելի աճով։ Այն հավաստվում է նաև մի շարք փաստերով, որոնք տարհեստի տարբեր ճյուղերում յուրօրինակ դրսևորումներ են ունեցել։

Մետաղագործության բնագավառում ապրանքային արտադրության զարգացման հետևանքով մոմի մոդելով իրեր պատրաստելը, երբ այդ մոդելից հանած կաղապարով միայն մի իր էր ձուլվում, համարյա դուրս մղվեց, պահպանվելով, իբրև բացառություն, և ընդհակառակը, լայնորեն գործածության մեջ մտավ փայտե մոդելից հանած կաղապարներով իրեր ձուլելը, երբ մի կաղապարով կարելի էր հարկ եղած քանակությամբ իրեր արտադրել։ Անիի պեղումների ժամանակ քաղաքի տարբեր թաղամասերում գտնվել են կահույքի բրոնզյա ձուլածո երկու ոտքեր՝ կապի ցեղին պատկանող մի կենդանու տեսքով։ Դրանք հար և նման են ու ձուլվել են միևնույն կաղապարով[1]։ Ուշադրավ է, որ երրորդ օրինակն էլ գտնվել է վրաց Դմանիսի քաղաքում, որը տուտարական կապեր ուներ Անիի հետ։ Բացի այդ, սկսեց կիրառվել հիմնական կաղապարի վրա դետալների մանր կաղապարներ կցելը, որով ձուլող վարպետները միևնույն կաղապարով բազմաթիվ առարկաներ ձուլելիս խուսափում էին նրանց նույնությունից[2]։ Այդ նույն նպատակով սկսեցին նաև ձուլածո իրերը լրացուցիչ մշակման ենթարկել փորագրությամբ։ Ոսկերչության մեջ մանր իրեր ձուլելու համար սկսեցին գործադրել որոշ ձևի կաղապարի մեջ մանրահատիկ, կպչուն հող լցնելու և իրի օրինակը նրա վրա ճնշելու միջոցով դրոշմելու, ապա ձուլելու տեխնիկան։

Մետաղագործության ավելի դյուրին և շատ արտադրանք տվող այնպիսի եղանակները, ինչպիսիք են կռելը և դրվագելը շատ լայն կիրառություն ստացան։ Պղնձագործ, արծաթագործ և ոսկերիչ վարպետները սկսեցին լայնորեն գործադրել ելուստավոր կամ խորաքանդակ զարդեր ունեցող հարթ խափշակների և խշտակների օգնությամբ մետաղի իրերը դրոշմելու տեխնիկան։ Նույն նպատակով սկսվեցին օգտագործել և իրենց ծայրին զարդ ունեցող մետաղե ձողեր՝ նկատներ։ Շուկայի տարբեր խավերի պահանջները բավարարելու համար XII—XIII դարերում նկատելի չափերով պատրաստվում և օգտագործվում են նաև զանազան մետաղների համաձուլվածքներ, մանավանդ ոսկեգույն և արծաթագույն համաձուլվածքներ, որոնցից պատրաստված իրեղեներ և զարդերը հաշված էին քաղաքի միջին խավերի, այսինքն սպառողների ավելի լայն շրջանների համար։ Լայնորեն կիրառվում է նաև արծաթե իրերի ոսկեջրումը։ Տեխնիկական այս եղանակները առաջացան արհեստագործության զարգացման և շուկայի համար համեմատաբար ավելի մեծ քանակությամբ իրեր պատրաստելու անհրաժեշտության շնորհիվ։

Խեցեգործության բնագավառում ապրանքային արտադրության զարգացման հետևանքով առաջացած փոփոխությունները հասարակ կամ անջնարակ և ջնարակած (գլազուրած) խեցեղենի ճյուղերում տարբեր արտահայտություններ են ունեցել։ Բայց երկուսի համար էլ ընդհանուր է այն, որ արտադրությունը կատարվում էր դերազանցապես բրուտի դուրգով, որը շատ վաղուց էր

[1] И. Орбели, Каталог Ани́йского музея древностей, СПб, 1911, էջ 84։

[2] И. Орбели, Грузинская лампада с арабскими надписями („Памятники эпохи Руставели"), Ленинград, 1938, էջ 284—287։ Տե՛ս նաև М. М. Дьяконов, Ширванский водолей 1206 г. (կետեղված է նույն ժողովածուի մեջ, էջ 249)։

գործածվում, բայց այժմ ավելի էր կատարելագործվել և պատեցվում էր լարի կամ փոկի միջոցով։ Այդ են վկայում XI դարի բանաստեղծ Վարդան Անեցու մի պոեմի հետևյալ երկու տողերը.

Եվ զհամատարած լարն վիճակի,
Որով շարժէ զճախարակ բրտի[1]։

Հասարակ խեցեղենի արտադրության տեխնիկան իհարկե առանձին փոփոխություն կրել չէր կարող, փոփոխվեց խեցեղենի զարդարման տեխնիկան։ Բաց կավի վրա խնամքով կատարվող գծագիրը, որը վարպետից նկարչական շնորհք էր պահանջում, ինչպես և կենդանիների ամբողջական ուռուցիկ պատկերներով վերադիր զարդերը, որոնք քանդակագործական որոշ շնորհքի և նկատելի աշխատանքի հետ էին կապված, փոխարինվեցին զրոշմելու զյուրին և մեծ տարածում ստացած տեխնիկայով։ Իսկ եթե գծագրելը, թեև փոքր չափերով, բայց պահպանվեց, ապա գծագիր նկարը կատարվում էր արագորեն և անփույթ։ Կան անոթներ, նույնիսկ բավական շքեղ, որոնց գծագրության եզերքներից չի հեռացված անգամ թաց կավի վրա գծագրելու ժամանակ դուրս ընկած կավը, մի բան, որ անհնարին էր անհատական արտադրության ժամանակ։

Ջնարակած խեցեղենը միջնադարյան քաղաքներում երևան եկավ որպես շուկայական արտադրություն և սկզբնապես սպասարկում էր վերնախավի պահանջները՝ փոխարինելով թանկարժեք մետաղներից պատրաստված սեղանի ամանեղենին։ Հետագայում զարգանալով, ջնարակած խեցեղենի արտադրությունը սկսեց սպասարկել նաև քաղաքի միջին, նույնիսկ որոշ չափով ստորին խավերի պահանջը։ Դրան համեմատ արտադրվում էին ամենապարզ և ցածրորակ ջնարակած ապյուսագույն կավե խեցեղենից սկսած, մինչև ամենարարձրորակ սպիտակակավ հախճապակյա անոթները, շուկայական տերմինով ասած՝ ամենաէժանից մինչև ամենաթանկը։ Թեև շարունակվում, նույնիսկ ընդարձակվում է ամեն տեսակի մետաղական թթվուկների օգտագործումը ջնարակի պատրաստման համար, բայց բնակչության լայն խավերի գործածության առարկաների վրա թանկարժեք կամ դժվարությամբ ձեռք բերվող թթվուկների կորալի, անագի, մարգանեցի և այլն) կիրառությունը սակավ է հանդիպում, իսկ էժան և շատ մատչելի թթվուկների (պղնձի, երկաթի, կապարի) օգտագործումը մասսայական է դառնում։

Փոփոխվում է նաև ջնարակած ամանեղենի զարդարման տեխնիկան։ Եթե IX—X դարերի համար բնորոշ էին բաց գույնի անգորով նկարազարդելը, ջնարակած անոթների անգորի վրա առանց գծագրի մուգ եզրագծերով հատակ և բարձրարվեստ նկարի կատարումը, իսկ X—XI դդ. հախճապակու սպիտակ կավի վրա թաց ժամանակ դարձյալ նուրբ ու բարձրարվեստ նկարներ գծագրելը՝ կենդանական, բուսական և երկրաչափական հատուկ պատկերների զուգորդությամբ, ապա XII—XIII դարերում բացարձակապես տիրապետում է գծագիրը, որը, սակայն, կորցրել է հստակությունը, խճողված է։ Ամեն տեսակի ոլորուն ու դարարուն գծեր, որոնք կատարված են սրածայր ձողով շատ արագ և անխնամ՝ բռնում են անոթների ամբողջ մակերեսը։ Եթե IX—X դարերում բարձրարվեստ անոթներ էին պատրաստվում նկարի ֆոնում անգորը լայն շեր-

[1] «Բազմավեպ», 1919, էջ 167։

տերով հեռացնելու եղանակով, ապա XII—XIII դարերում թեև այդ տեխնիկան պահպանվում է, բայց արդեն այլ բնույթ ունի՝ անոթը հեռացվում է միայն գծագրի ձևով, բայց ոչ նրա ֆոնում՝ լայն շերտերով։ Այդ ամենի շնորհիվ ամանեղենի զարդարումը շատ դյուրին և արագ էր կատարվում։

XII—XIII դարերում երևան է գալիս նաև սև կամ մուգ կապույտ և այլ մուգ գույների ենթաջնարակային գծագիր։ Նկարը, մեծ մասամբ շախմատաձև ճառագայթավոր և այլն, որը ծածկվում է թափանցիկ ջնարակով։

Ջնարակած անոթների զարդարման այս եղանակները ևս բնորոշ են ոչ թե անհատական, պատվերով կատարվող, այլ շուկայական ավելի ընդարձակ արտադրության համար։ Իրոք, Անիի և Դվինի XII—XIII դարերի շերտերում ջնարակած խեցեղենը հսկայական քանակություն է կազմում։

Տարբեր գույների ջնարակների զուգորդությունը ևս XII—XIII դարերում կորցնում է նախկին մեղմությունը և ավելի իայտարդեա է դառնում։ Իհարկե, այժմ էլ կոբալտով և այլ թանկարժեք թթվուկներով ներկվող ջնարակները գործադրվում և բարձրարվեստ անոթներ պատրաստվում են, բայց միայն վերնախավի պահանջները բավարարելու համար և սովորաբար նրանց պատվերով։

IX—X դարերի համեմատությամբ խեցեղենի զարդարման արվեստը XII—XIII դարերում միանգամայն այլ բնույթ է ստանում։

Ապակեգործության մեջ IX—X դարերին բնորոշ կաղապարների օգնությամբ նուրբ գույներով կամ փորագիր, մանավանդ նկարի ֆոնը հեռացնելով, ռելիեֆ զարդեր ունեցող ապակու արտադրությունը՝ XII—XIII դդ. տեղի է տալիս սովորական կանաչավուն կամ դեղնավուն ապակե անոթների արտադրությանը։ Զարդերի մեջ այժմ գերակշռում է ձուլած ապակու ծոր տալու եղանակով արված վերադիր զարդը։ Հաճախ է կիրառվում նաև այլ գույնի ապակուց անոթների վրա ուռուցիկ բծեր դնելու եղանակը։

Սմալտայից պատրաստված և նուրբ երկնագույն, կապույտ ապակյա ապարանջանների արտադրության տեղ, որը բնորոշ էր IX—X դարերի համար, XII—XIII դդ. մասսայաբար արտադրվում են կանաչավուն, դեղնավուն և մուգ գույների անզարդ կամ պարույրաձև ոլորուն ապարանջաններ։

X—XIII դդ. առ ու ծախքի առարկա են դառնում նաև կտրված և տաշված բարը, աղյուսը, շքաղյուսը, կիրը, գիպսից կաղապարով պատրաստված զարդերը, որոնք գործադրվում էին շենքերի ներսի հարդարման համար, նաև փայտե իրերն ու առարկաները։ Գիպսի զարդերի տեխնիկան ևս փոփոխվում է։ Եթե X դարում Դվինում, Անիում շենքերը ներսից զարդարում էին գիպսե փորագիր զարդերով, ապա XII—XIII դարերում տիրապետող են դառնում կաղապարով թափված զարդերը, որոնք հանդիպում են մեծ քանակությամբ։

Շատ բնորոշ են ապրանքային արտադրության զարգացման հետևանքով կատարված փոփոխությունները գործվածքների արտադրության և ներկման տեխնիկայի մեջ։ Նախ նկատենք, որ խիստ բազմանում են գործվածքների տեսակները։ Արտադրվում են գործվածքներ՝ սկսած ամենարարձրորակ դիպակներից մինչև վուշե և բամբակե կոպիտ պատառակներ։ Եթե բնակչության միջին և ստորին խավերը գործվածքների իրենց պահանջը առաջ բավարարում էին հիմնականում իրենք՝ տնայնագործական եղանակով, ապա քաղաքի միջին ու ստորին խավերը X—XIII դդ. հետզհետե գործվածքները սկսում են գնել

առավելապես քաղաքների արհեստավորական շրջանում ու շուկայում։ Քաղաքային ջուլհակների արտադրանքը ձեռք են բերում մասամբ և գյուղացիները։

X դարում շատ են հիշատակվում հայկական ոսկեթել և ոսկեճամուկ դիպակները, իսկ XII—XIII դարերում, ինչպես ցույց են տալիս Մատենադարանի ձեռագրերի կազմերի տակ փակցրած նյութերը, ոսկեթել և արծաթաթել դիպակներից բացի արտադրվում են ոսկեգույն և արծաթագույն ներկած մետաքսաթելերով գործված դիպակներ։ Սակայն այս բարդ ծաղկանկար գործվածքների սահմանափակ արտադրության կողքին մեծ տեղ են բռնում միագույն կամ շատ պարզ նկար ունեցող վուշե ու բամբակե գործվածքները։ Սրանց նկարը կազմըվում է ոչ թանձ ներկերով ներկված տարբեր գույնի թելերից գործված պարզ գծերի ու շերտերի հաջորդականությամբ։ Ավելի հաճախ են հանդիպում միագույն կամ բոլորովին աններկ գործվածքները։ Վերջապես տեղի է ունենում մի շատ նշանակալից երևույթ՝ գործվածքների ներկման մեջ մշակվում և լայն չափերով կիրառվում է դրոշմազարդումը (դաջելը), որը կատարվում էր փայտյա դրոշմների օգնությամբ. Չներկած սպիտակ գործվածքների վրա այս եղանակով կարելի էր ստանալ զանազան ծաղկանկարներ, իսկ տարբեր դրոշմների հմտորեն զուգորդումը լայն ասպարեզ էր բաց անում գործվածքների գեղարվեստական զարդարման առջև, թույլ էր տալիս օգտագործել հմուտ նկարիչ-քանդակագործների շնորհը շատ բարձրարվեստ նկարների դրոշմներ պատրաստելու և դրանցով գործվածքները դրոշմազարդելու (դաջելու) համար։

Զննելով միջին դարերից մեզ հասած դրոշմազարդ գործվածքները, դժվար չէ նկատել, որ դրոշմները լինում էին երկու տեսակ, դրանցից մի տեսակը ներկում էր նկարը, սպիտակ թողնելով ֆոնը, իսկ մյուսը ներկում էր ֆոնը, գործվածքի բուն գույնը պահպանելով նկարների համար։ Շատ հաճախ շերտ առ շերտ զուգակցվում էին նաև տարբեր գույները կամ տարբեր գույներով ներկվում էին ֆոնն ու զարդերը։

Գործվածքների դրոշմազարդման տեխնիկան, որը բնորոշ է շուկայական արտադրության համար, XIII դարում համարյա դուրս մղեց դիպակների արտադրությունը, նրա դժվարին տեխնիկայով հանդերձ։

Մանածագործության մեջ թեշիկների կողքին, հավանաբար X—XI դդ. լայն կիրառություն է ստանում մանելու ճախարակը (ջահրիկը), որը արդեն վճռական դեր է խաղում[1]։

---

[1] Թել մանելու ճախարակի կիրառության մասին վկայություններ կան XII—XIII դարերի հայկական աղբյուրներում՝ Ներսես Շնորհալու հանելուկներում, Անիի 1223 թ. Երազահանում (Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 205 բ), ժողովրդական տաղերում և այլուր։ Շնորհալու հանելուկներում, օրինակ՝ մանելու ճախարակի (ջահրա, ջահրիկ) մասին կարդում ենք.

Զորեկուսի միալարի,
Քառասուն թևով ինքն շրջի,
Աջակողմամբն շրջ գայի,
Ձախովն ի ներս տայ յարմարի։

(1913 թ., տպված տաղարան, էջ 11)։

Իսկ մի այլ հեղինակի մոտ հանդիպում է՝

Ջահրիկն փորր էր գետ ծրար
Ու գրնկընար գերդ մանծրար։

(Մատենադարանի ձեռագիր № 3595, էջ 77բ)։

Շուկայական արտադրություն էին դարձել նաև կաշվի մշակումը, մորթեգործությունը, կոշկակարությունը, թամբագործությունը, լկմարարությունը (ձիերի սանձեր, փոկեր պատրաստելը), լարարությունը (աղեղների և այլ գործիքների համար աղեղարեր պատրաստելը) և կաշեգործության հետ կապված մյուս արհեստները։ Քաղաքներում առաջացել էին կաշեգործների, կոշկակարների, թամբագործների փողոցներ կամ շարքեր, որտեղ այդ ապրանքները և՛ արտադրվում, և՛ վաճառվում էին։

Առ ու ծախքի առարկա են դառնում նաև մագաղաթը, թուղթը, ներկերն ու թանաքները, վերջապես գրքերը։ Գրքերի շուկայական արտադրությունը պահանջում էր դյուրացնել գրքերի պատրաստումը և ամենից առաջ արտադրության ծանր գործը, և եթե X դարում դեռևս գերակշռող էր երկաթագիրը, որը շատ ծանր աշխատանք, ավելի մեծ քանակությամբ թուղթ կամ մագաղաթ էր պահանջում, ապա հետագայում գրքերը գրվում են առավելապես բոլորագրով, երբեմն ավելի մանր գրությամբ, քան այժմյան տպագիր գրքերը։ Բացի այդ, հաշվի առնելով շուկայի պահանջը, պատրաստում են սկսած միանգամայն հասարակ և անգարդ գրքերից մինչև ամենաշքեղ գրքերը, վերջիններս մեծ մասամբ վերնախավի համար և սովորաբար նրա ներկայացուցիչների պատվերով։

Գրչագրության տեխնիկայի մեջ ևս որոշ փոփոխություն առաջացավ, որով դյուրին էր դառնում գրքերի կաշե կազմերի զարդարումը։ IX—X դարերի համար բնորոշ կարկինի ու մետաղե գրիչի օգնությամբ զարդեր գծագրելու փոխարեն տիրապետող է դառնում կաշվի վրա մետաղի ձողերի (նկատների) ծայրի զարդերի օգնությամբ դրոշմելու եղանակը։

Առևտրի ոլորտը, իրրև ապրանք, մտել էին նաև այնպիսի նյութեր, որպիսիք էին դեղանյութերը, անուշահոտ օծանելիքները, վարդաջուրը, շաքարը, օճառը և շատ այլ նյութեր, որոնք հանդիսանում էին արհեստագործական արտադրանք։

Ապրանքային արտադրության զարգացումը և արհեստագործական արտադրանքի ընդարձակումը թելադրում էին հաշվի առնել շուկայի պահանջարկը։ Իսկապես, XII—XIII դարերից մեզ հասած հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ արհեստավորները հաշվի են առել ոչ միայն քաղաքի և գյուղի տարբեր խավերի, այլև տարբեր էթնիկական խմբերի պահանջները։ Այդ երևույթը դրսևորվել է արտադրանքի տեսակների ու որակի խիստ բազմազանությամբ, այլև զարդաձևերի ու մոտիվների ընտրության մեջ, առարկաների, զարդերի նմանեցումով Արևելքում սովորական և տարածված զարդերին, անգամ արաբական դրերին։

Հաշվի առնելով ոչ հայ բնակչության պահանջմունքը, տեղական արհեստավորները երբեմն արտադրել են ոչ հայկական զարդեր կրող իրեր և առարկաներ, ինչպես տեղում հաստատված այլազգի բնակչությանը վաճառելու, նույնպես և արտահանման համար։

Արհեստագործության մեջ տեղի ունեցած աշխատանքի բաժանման շնորհիվ և բնակչության բազմակողմանի ու աճող պահանջարկի սպասարկման համար՝ Հայաստանի քաղաքներում IX—XIII դարերում առաջացել էին շատ մեծ թվով արհեստներ ու արհեստային մասնաճյուղեր։ Հին ժամանակներից զարգացող գլխավոր արհեստները այդ ժամանակներում տրոհվում էին՝ առաջացնելով մի շարք ինքնուրույն արհեստներ ու մասնաճյուղեր։ Այսպես օրինակ,

եթե դարբնությունը հնում մի ընդհանուր արհեստ էր, ապա IX—XIII դարերում նրանից անջատվելով առաջացել էին մի շարք ինքնուրույն արհեստներ՝ դինագործություն, փականագործություն, դանակագործություն, նետագործություն («նետարարություն»), պայտարություն («նալբանդ»), նաև այլ մասնագիտական ճյուղեր։ Նույն բանը վերաբերում է նաև մնացած բոլոր հիմնական արհեստներին։ Մատենագրական աղբյուրների և հնագիտական նյութերի քննությամբ պարզել ենք, որ IX—XIII դարերում այդ երևույթը այնքան էր խորացել, որ Հայաստանում գոյացել էին հարյուրից ավելի արհեստներ և արհեստային մասնաճյուղեր։

Այսպիսով, ֆեոդալական հասարակության արտադրողական ուժերի աճը, արհեստագործության անջատումը երկրագործությունից և կենտրոնացումը քաղաքներում, նրանց զարգացումը և աշխատանքի բաժանումը ըստ արհեստագործության ճյուղերի, դրա հետ միաժամանակ ֆեոդալական կալվածի ձևավորումը հանդիսացան ապրանքային արտադրության զարգացման նյութական պայմանները, իսկ քաղաքի անջատումը գյուղից և ապրանքների նկատմամբ հասարակության բոլոր խավերի պահանջարկի ընդարձակումը՝ նրա տնտեսական պայմանները։

Ապրանքային արտադրությունն իր հերթին խոշոր չափով նպաստում էր ֆեոդալական հասարակության արտադրողական ուժերի աճին, աշխատանքի բաժանման խորացմանը, ինչպես գյուղի և քաղաքի միջև, նույնպես և արհեստագործության մեջ, ուր գոյանում էին արհեստային նորանոր ճյուղեր ու մասնաճյուղեր։ Ի վերջո տեղի է ունենում առևտրի անջատումը արհեստագործությունից, զարգանում են ներքին և արտաքին առևտուրը։ Քաղաքների զարգացման շնորհիվ առաջ է գալիս քաղաքային դասը («քաղաքականք») իր անմիատարր կազմով, որի մեջ մտնում էին քաղաքի ստորին խավերից սկսած մինչև խոշոր հարստությունների տիրացած «մեծատունները», բայց որի հիմնական զանգվածը կազմում էին քաղաքային միջին խավերը՝ արհեստավորները, առևտրականները և այն բնակչությունը, որը ապրելով քաղաքներում՝ շարունակում էր պարապել երկրագործությամբ։

Քաղաքային կյանքի և ապրանքային արտադրության զարգացման հետևանքով խորանում է սոցիալական շերտավորումը ֆեոդալական հասարակության մեջ և սրվում են դասակարգային ու դասային ներհակությունները ու պայքարը։

РАЗВИТИЕ ТОВАРНОГО ПРОИЗВОДСТВА И РЕМЕСЛЕННОЙ ТЕХНИКИ В АРМЕНИИ IX—XIII ВВ.

Б. Н. АРАКЕЛЯН

(Резюме)

В статье указывается, что города древней (античной) Армении, при зарождении феодального общества и в ранний период его развития пришли в упадок и потеряли не только свое административно-политическое,

[1] Տե՛ս Բարկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1958, հատկապես «Աշխատանքի բաժանումը արհեստագործության մեջ» գլուխը (էջ 316—333)։

но и экономическое значение. Вследствие этого товарное производство сильно сократилось. Экономический подъем страны, образование феодального города в Армении в IX—X вв. и развитие товарного производства в IX—XIII вв. явились не следствием нового подъема международной транзитной торговли, как полагал ряд арменоведов, а результатом развития производительных сил феодализма и разделения общественного труда, приведших к возникновению феодальной вотчины и к отделению ремесла от земледелия и города от деревни. В результате отделения города от деревни расширяется товарообмен между ними, что в свою очередь привело к росту товарного производства.

В статье особо рассматривается развитие товарного производства в городском ремесленном производстве, вследствие чего происходили соответствующие сдвиги и изменения в технике ремесленного труда.

Развитие производительных сил феодального общества, отделение ремесел от земледелия и их сосредоточение в городах, широкое разветвление ремесленного труда по многочисленным отраслям вместе с возникновением феодальной вотчины создали материальные предпосылки для развития товарного производства, а отделение города от деревни, расширение спроса на различные товары во всех слоях общества явились экономическими условиями товарного производства в феодальной Армении IX—XIII вв.